և ծերունեաց, և 'ի վաղիւն գործակալաց, բայց զպահանջ Դատաւորին ոչ յայտնեցին, զի մի գրգռեսցեն զազահութիւնս այլոց։ Եւ նոքա ասեն՝ հնազանդեցարուք առ այժմ խոստման Դատաւորին, և այլքն հետեւաբար կատարին, միայն սկիզբն արասցուք գործոյն։ Եւ մինչդեռ Հայք խորհէին 'ի վերայ այսոցիկ իրաց, լուան յանկարծ թէ երկրորդ Թարգմանն Ցունաց և այլք գնացին 'ի Դամասկոս՝ ամբաստան լինիլ զՈստիկանէն և զՀայոց, և Քաղաքապետն կամակից նոցին՝ տուեալ զօրականս և վասն երկիւղի ճանապարհին։ Եւ խնացեալ զայս գործակալացն՝ հարցին զՔաղաքապետն, և նա ուրացաւ և չգիտեալ ձեւանայր, բայց զզօրականս խոստովանէր տուեալ 'ի խնդրոյ Ցունաց։ Բայց նոքա ստուգեցին լեալ գիտութեամբ Քաղաքապետին, որովհետեւ գիտէր զբանս ժողովոյն, եւ գրեալ էին դիր ինքն և Դատաւորն եւ գիտութեամբ իւրեանց առաքեալ զՍախարեայն։ Իսկ Ոստիկան Կուսակալին բարւոք տեղեկացեալ այսոցիկ իրաց՝ զայրացաւ յոյժ, և ինքն ևս գրեաց գանկատանս զՑունաց առ Բդեշխն, և զՍախարեայն կացուցանէր յանցաւոր յամենայն ժողովս իբրեւ ընդդիմախօս Տէրութեան, և փութացոյց զայն հեծելաւ 'ի Դամասկոս։ Եւ 'ի վաղիւն գործակալք առաքեցին զոմանս առ Դատաւորն հարցանել թէ ընդէ՞ր դադարեաց 'ի գործոյ, և ստիպէին սկիզբն առնել և կատարել զխոստացեալսն։ Եւ նա արար պատասխանի, թէ Հայք առաւել խնդրեն քան զխոստացեալս իմ, ուստի և ես յետս կացի։ Բայց ըզպահանջ իւր ծածկեաց։ Կոչեցին զՀայս և ստիպէին զնոսա չատանալ այնքանեօք, և նոքա տատանեալ 'ի միտս ոչ կարէին յայտնել զծածկեալն։ ասէ Մուվէլլայն՝ երեւի թէ պահանջ Դատաւորին ծանր է եւ Հայք անկարող՝ և այսպէս պատճառանօք յերերի կայ գործն, սակայն Հայք ոչ կարեն յայտնի խօսիլ, զի երկնչին 'ի Դատաւորէն և յայլոց, այլ որպէս և իցէ պարտ է շահել զմիտս Նորա, եւ սկիզբն առնել գործոյն։ Գուցէ յանցանել տուրց, զզլխացի նաեւ զխոստացեալսն անգամ չկատարել, և անկցի ատելութիւն 'ի մէջ մեր և Նորա և լիցին պատճառ խռովութեան։ Դնացին Հայք դարձեալ առ Դատաւորն և աղաչէին զնա ստէպ, այլ նա ոչ երբէք զիջանէր 'ի բանից